ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1950 *Общественные науки*

ՆՈՒՐԹԵՐ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վ. Հակոբյան եվ Վ. Ոսկանյան

# ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՍՈՒՎՈՐՈՎԻ ՄԱՍԻՆ

*1950 թ. մայիսի 18-ին սովետական ժողովուրդը նշեց աշխարհի մեծագույն զորավարներից մեկի, ռուս ժողովրդի հանճարեղ զավակ Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովի մահվան 150-ամյա տարեդարձը։*

*18-րդ դարի երկրորդ կեսի ութ պատերազմների ու բազմաթիվ ճակատամարտերի մասնակից ու հերոս, միշտ անպարտելի Սուվորովը մարմնավորել էր իր մեջ ռուս զինվորի խիզախությունը, տոկունությունը, ստեղծագործական ընդունակություններն ու առաքինությունները։ Ջերմ հայրենասեր, ամեն ինչ իր ժողովրդին տալու մշտական պատրաստ զինվոր-զորավարը անկեղծ սրտով ասում էր. «Ամեն ազնիվ մարդ պետք է բարի անուն ունենա, անձամբ ես այդ բարի անունը տեսել եմ իմ հայրենիքի փառքի մեջ, իմ հաջողությունների բացառիկ նպատակն է եղել նրա բարեկեցությունը»։*

*Ալեքսանդր Վասիլևիչը ոչ միայն մշակել ու կատարելության է հասցրել «Հաղթանակի գիտությունը», այլև դաստիարակել է զորավարների փառապանծ սերունդ ու ոգեշնչել մարտիկներին կռվելու և հաղթելու ի փառս հայրենիքի։ Հայրենական մեծ պատերազմի օրերին ընկեր Ստալինը 1941 թվի նոյեմբերի 7-ին Կարմիր հրապարակում արտասանած իր ճառում ի թիվս ռուս ժողովրդի մեծագույն զավակների նշեց և Սուվորովի անունը։*

*Երախտագիտության խոր զգացմունքով են նշում ռուս գեներալիսսիմուսի անունը Անդրկովկասի ժողովուրդները, որոնց ազատագրության պայքարի պատմության մեջ նա իր պատվավոր տեղն ունի։*

*Դեռևս 17-րդ դարում իրենց ազատագրության բախտը Ռուսաստանի օգնության հետ կապող Անդրկովկասի ժողովուրդներն իրենց հայացքը հյուսիս հառած, հետևում էին ռուսական զենքի ու դիվանագիտության հաջողություններին, որոնցից մեծապես կախված էր արևելյան ստրկատիրության ու ագրեսիայի պատվար օսմանական կայսրության ուժերի ջլատումն ու ազատագրական պայքարի հաջողությունը։*

*Ռուս-թուրքական առաջին պատերազմից (1768—74) հետո, երբ ռուսական կառավարությունը Ղրիմի միացման համար ձգտում էր թուլացնել զիրեյների դիրքերը (քայքայելով նրանց իշխանության տնտեսական հիմքերը), որոշվեց թերակղզուց Ազովյան մարզ փոխադրել արհեստավորական-առևտրական (ուրեմն և հարկատու) տարր կազմող հայերին և հույներին։ Դաղթի դժվար և կարծես արդեն տապալվող ձեռնարկումը հանձնվեց փառապանծ զորավարին։*

*Ամենադժվարին պայմաններում Սուվորովն անում է հնարավոր մաք-*

սիմումը՝ 15000 հայ գաղթականների ծանր դրությունը բարելավելու, ապրուստի միջոցներով ու բարենպաստ բնակավայրերով ապահովելու համար։

Երբ ռուսական քաղաքականությունը կուրս է վերցնում նվաճել Անդրկովկասն ու Մերձկասպյան ռայոնները, Սուվորովն ստանում է «գաղտնի և կարևոր հանձնարարություն» և երկու տարով ուղարկվում է Աստրախան, որտեղից նա կապ է հաստատում Անդրկովկասյան և մասնավորապես հայ գործիչների հետ, ուսումնասիրում ապագա արշավանքի քաղաքական ու տնտեսական պայմանները, կարիքի դեպքում շտապ և էֆեկտիվ օգնություն հասցնելու նպատակով։ Միաժամանակ նա քննարկում է տեղական առաջարկները և ներկայացնում կառավարությանը։

Հայերի հարցը Սուվորովին զբաղեցնում է նաև հետագայում՝ միայն այն չափով, ինչ չափով այդ հնարավոր էր արտաքին քաղաքական կուրսի փոփոխման պայմաններում։ Ռուս-թուրքական երկրորդ պատերազմի շրջանում Սուվորովն օգտվում է հնարավորությունից Մոլդավիայի, Վալախիայի և Բուկովինայի հայ բնակչությանն օգնելու և Ֆոքշան, Յասսի և այլ քաղաքներում բնակվող հայերի գաղթին նպաստելու համար։[1]

Հայերի նկատմամբ այսպիսի հոգատարությունը փոխհատուցվում էր ժամանակակից առաջավոր գործիչների մեծ հարգանքով և ջերմ սիրով դեպի մեր ժողովրդի մեծ բարեկամը։

Մոսկվայի Լենինի անվան Պետական Հանրային գրադարանի հայկական ձեռագրերի ֆոնդի № 7 փաստաթուղթը (Арм. 7) Ա. Վ. Սուվորովին ուղղված Երուսաղեմի պատրիարք Հովակիմ Քանաքեռցու նամակն է։[2]

Այս վավերագիրն ինքնին ներկայացնում է մեծ հետաքրքրություն, նամանավանդ, եթե հաշվի առնենք այդ նամակի հետ կապված որոշ հարցերի պարզաբանման անհրաժեշտությունը՝ հայ-ռուսական հարաբերությունների պատմության այդ շրջանի ուսումնասիրության համար։

Նամակին առիթ է տվել Հովակիմ Քանաքեռցու եղբայր Գաբրիել արքեպիսկոպոսի միջոցով Սուվորովի կողմից Երուսաղեմի ս. Հակոբի վանքին ուղարկած նվերը։ Վերջինս մի նկար է, որը ներկայացնում է ս. հոգու գալըստյան տեսարանը։ Թե ի՞նչ առիթով է Սուվորովն այդ նկարը նվիրել Երուսաղեմի ս. Հակոբի վանքին, առայժմ չկարողացանք պարզել։

Նամակի հիմնական բովանդակությունը շնորհակալական ուղերձ է, որի մեջ հեղինակը ի միջի այլոց Սուվորովից խնդրում է. «... Ի մարդասիրութենէ քումմէ, զի հանապազ հիշատակըս մեր ի մէջ ազգի և ընտանեաց քոց յիշեսցես ի բարին։ Եւ ի յազգէ մերմէ ուր և պատահեսցի զմարդասիրութիւն ցուցես, մանաւանդ զայնոսիկ որ ի գործնառութիւնս մեր իցէն վիճակեալ...»

Բնագրի ներքևի ձախ և վերևի աջ անկյունները վնասված լինելու պատճառով, նամակի թվականի հետքը կորել է, ուստի մեզ անհայտ է մնում վերջինիս ստույգ տարեթիվը։ Բայց որովհետև մեզ ստույգ հայտնի է, որ Երուսաղեմում Պողոս Վանեցի պատրիարքին հաջորդում է Հովակիմ Քանա-

[1] Մ. Ներսիսյան, Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները, Երևան, 1944 թ։

[2] Մեզ հայանի էր, որ հայկական ձեռագրերի համառոտ բիբլիոգրաֆիան կազմելիս, նամակի մասին տեղեկություն ուներ ընկ. Լ. Խաչիկյանը։

Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի Աստուածաւուր տէր Հովհաննիսեանց, հատոր Բ, 1890, Երուսաղէմ, էջ 107։

քեռցին 1775 թ. օգոստոսից, և որ վերջինս էլ մահանում է 1793 թ. Վարագա խաչի տոնին, այսինքն սեպտեմբերի 25-ին, կիրակի օրը, նշանակում է Հովակիմ Քանաքեռցու սույն նամակը գրվել է մինչև 1793 թ. սեպտեմբերի 25-ը։

Մ. Առավնունու աշխատության մեջ Ա. Վ. Սուվորովի ուղարկած նվերի մասին որևէ հետք գտնելու մեր որոնումները իզուր անցան։

Ստորև բերում ենք նամակի բնագիրը։ Բազմակետերը և անկյունավոր փակագծերում կատարված լրացումները ցույց են տալիս բնագրի վնասված լինելը։

* * *

«Ի սուրբ և փառաւորեալ աստուածազարդ և մեծապայծառ հրաշալի և հրաշափառ լուսածաւալ և յԱստուածակոխ սրբոյ և մեծի Մայրաքաղաքս Երուսաղէմի։ Նախ ի սուրբ Նազարեթէ, ուր հրեշտակապետն Գաբրիէլ Աւետեաց սրբուհւոյ կուսին Մարիամու, որով յղացաւ զբանն աստուած, եւ ի գերապատիւ և հրաշակառոյց սուրբ ծննդենէն Քրիստոսի. Եւ ի մեղսալուաց սուրբ Յորդանանու ի սուրբ Մկրտութենէն Քրիստոսի. Եւ ի Թաբորական Պայծառակերպութեան սուրբ լեռնէն Քրիստոսի. Եւ ի Սարսափելի սուրբ Գողգոթայէ ի սուրբ խաչելութեան տեղւոյն Քրիստոսի. Եւ յԱստուածաշնչափ սուրբ պատանատեղւոյն Քրիստոսի. Եւ ի շնորհաբաշխ Աստուածընկալ Ամենասուրբ կենսատու գերեզմանէն Քրիստոսի. Եւ ի սուրբ հրաշալի սրբոյ Յարութեան Աշխարհամատրան Տաճարէն Քրիստոսի. Եւ ի սուրբ Զիթենեաց լեռնէն ի սուրբ Համբարձման յոտնակոխ տեղւոյն Քրիստոսի. Եւ ի սուրբ Գալիլիայ ժամադիր տեղւոյն Քրիստոսի. Եւ ի սուրբ Սիոն վերնատանէն գալստեան Հոգւոյն սրբոյ ի դասս որբ[ա]զան Առ[ա]քելոցն Քրիստոսի. Եւ ի հրաշալի սրբոց Հրեշտակապետաց սուրբ Տաճարէն յառաջին սուրբ բանտէն և ի սուրբ ծառէն Քրիստոսի. Եւ յԱմենասուրբ փրկչի տաճարէն յերկր[որ]դ սուրբ բանտէն և ի սուրբ Կափարիչ վիմէն Քրիստոսի. Եւ ի սուրբ Յոհանու Աւետարանչի տաճարէն յերրորդ սուրբ բանտէն և ի սուրբ Սիմէն, յոր կապեցաւ կենարարն մեր Քրիստոս. Եւ ի Ս|է|ոբէագումար և շնորհածաւալ Սրբոյ գերեզմանէ Ամենօրհնեալ Տիրամայր Սուրբ Աստուածածնին. Եւ ի սրբոց Յակոբեանց Սքանչելագործ երջանիկ և սրբազան ընտրեալ Առաքելոց գերագահ Աստուածադիր Արոնոյս ամենայն Հայոց, և այլ ամենայն Սքանչելեօք լցեալ Արփիացուցիչ հոգւոց բոլոր փրկագործ Տնօրինական Տեղեաց Տեառն մեորոյ (SIC) և փրկչին Յիսուսի Քրիստոսի մարմնացեալ բանին Աստուծոյ. Եւ ի Սոցին Անարժան սպասաւորէ ի տէր Յովակիմ մեղապարտ վարդապետէ և Պատրիարգէ սրբոյ քաղաքիս Երուսաղէմի, Արամեան ազգիս։ Յորոց ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և պարէտ պահպանութեան շնորհք և աղօթք Առաքելական և Աստուածային անճառելի և բազմապատիկ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն և առատապարգև ողորմութիւնն ի վերայ խաչին զօրացեալ հաւատարիմ և քաջագոյն Զօրաւարիդ Ազնուագոյն ազգիդ Ռուսաց Արէքսանտր Վասիլովիչ Սուարով Ճէներալիդ և

---

1 Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի Աստուածատուր Տէր Հովհաննիսեանց, բ. հատոր, 1890, Երուսաղէմ, էջ 119։

2 Մկրտիչ Եպիսկոպոս Ազաւնունի, Միարանք և այցելուք հայ Եղուսաղէմի, 1929 թ., Երուսաղէմ։

բարեբարոյ Կողակցին քոյ հոգեսէր Վառվառայ Իվանովնայ. Եւ բարեպտուղ Դստեր քոյ Նաթալայեայ Ալէքսիովնայ և այլ ամենայն ընտանեացդ, սիրելի և համախոհ ճշմարիտ բարեկամացդ կալ և մնալ քեզ ընդ նոքօք միշտ խնդութեամբ և խոր խաղաղութեամբ խնդալ ի փառս Տեառն և ի պարծանս սրբոյ Խաչին Քրիստոսի ամէն։

Շնորհք սէր խաղաղութիւն և առատապար[գ]և ողորմութիւն Ապէնիազ և բարերար Ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ, և օրհնութիւն համայն Սրբազնասուրբ Տնօրինական Տեղեաց Տեառն մերոյ. միշտ և հան[ա]պազ և յամենայն ժամու դետօրէն յորդահոս և անսպառ խաղացմամբ առատապէս հեղեալ ծավալեսցի և տարածեսցի ի վե[ր]այ օրհնեալ տանց և բնակութեանց և բարեզարդ քանակաց, բոլոր որդւոց և դստերաց, զարմից և զաւակաց, ընչից և ապրանաց և ամենայն ստացուածոց և ամենայն ինչք և ստացուածք, որ ի ձեռս ձերէ Աստուածային օրհնութեամբն աճեսցի, առատասցի, բազմասցի և բարգավաճեալ ծաղկեսցի և անհատական եղից համբաւ բարի մի պակասեսցի ի շառաւիղէ ձերմէ ի յաւիտեանն ամէն։Եւ ընդ Աստուածապարգև և սիրալիր օրհնութեան դրոյս, ծանուցումն լիցի մեր յոյժ սիրելի և Աստուածասէր (ի յանծանօթսՏՀC)բարեկամիդ, և հոգևոր զաւակիդ, զի թէպէտ հանապազ ի յառ և ի տուր շնչոյս պարտական եմք ամբաւ շնորհակալութիւնս մատուցանել Աստուծոյ, որ և մատուցանեմք իսկ, սակայն ի պատահիլն ազնիւ հազուագիւտ և ճգնող (ՏՀC) բարութեանց առաւել արծարծի սէր հոգւոց ի նորագոյն շնորհակալութիւնս Անկարօտին Աստուծոյ, որ միշտ նորագոյն երգօք փառաբանի ի յանմարմին անհամար զօրացն հրեշտակաց, որ և ընկալնուլ հաւատամք ի մէնջ ի հոգեղինացս զշնորհակալութիւնս, և անշնորհակալ լինիլն կարի տմարդութիւն երևի առաջի մարդկան և Աստուծոյս, վասն որոյ և ի լսելն մեր զբարերարութիւն և զմարդասիրութիւնս, զոր արարեալ էիր մեծապատիւ եղբօր մերում ի պատիւ սուրբ Տնօրինական Տեղեաց Տեառն մերոյ, և որպէս մերում անարժանութեան իրաւի ուրախութիւն սրտից մերոց եղև ոչ սակաւ. և ցնծացաք ի հոգի և ի մարմին, վասն որոյ շնորհակալութինս ամբաւս մատուցաք Աստուծոյ և օրըստօրէ մրտածելով զբարերարութեանցդ, զորս պատմէ մինչ՝ խոհեմագոյն եղբայրն մեր Գաբրիէլ Արհիեպիսկոպոսն նոր ի նորոյ բերկրի սիրտ մեր։ Եւ զողորմութինս զոր շնորհեալ էիր հասոյց ի սուրբ Աթոռս, զոր և ընկալցի բարերարն Աստուած ի հաճոյս իւր։ Եւ յիշատակն քոյ զպատկերդ՝ Հոգւոյ Սրբոյ գալստեան, զոր յանձնարարեալ էիր վերոհիշեալ Գաբրիէլ վարդապետին և ծայրագոյն նուիրակին, նկարեալ ձեռամբ հանճարեղ արուեստաւորին պատուական և զունզգոյն երանգօք, արձանացուցաք ի մէջ սրբոյ Յարութեան Տաճարին, յանդիման շնորհաբուղխ Գերեզմանին Քրիստոսի, ի վերայ մարմարոնեայ սեան, որ է առաջի իւղաբեր սուրբ կանանց անուան յիշատակեալ Սեղանոյն, յիշատակ անջնջելի և հանապազորդական, որոյ շնորհացն բարերարն Աստուած հաղորդակիցս արասցէ զվերոգրեալ բարեպաշտ և Աստուածասէր քաջագոյն Զօրապետդ և զամենայն Ազգակիցս, և զզաւակս, և զընտանիս քոյ։ Եւ արդ՝ որովհետև միջնորդութեամբ Սրբազնասուրբ և դեղեցկասկար Պատկերի գալստեան Հոգւոյն Սրբոյ բարեկամացեալ և որպէս թէ համարձակութիւն գտեալ խնդրեմ ի մարդասիրութենէ քումմէ, զի հանապազ յիշատակս մեր ի մէջ ազգի և ընտանեաց քոց յիշեսցես ի բարին. և ի յազգէ մերմէ ուր և պատահեսցի զմարդասիրութիւն ցուցցես, մանաւանդ զայնոսիկ որ ի գործնառութինս մեր իցեն վիճակեալ և

զոր ինչ արասցես ի յԱնուն սուրբ տեղեացն Քրիստոսի և մերս անարժանութեան բարերարն Աստուած ի փառս իւր ընկալցի։ Որպես ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս, թէ զամենայն զոր ինչ առնիցեն ձեզ, ինձ համարեալ է, ըստ այնմ, որ ընդունի զձեզ, զիս ընդունի, և որ զիս ընդունի, ընդունի զԱռաքիչն իմ, որ ընդունի զՄարգարէ, յանուն Մարգարէի, զվարձս Մարդարէի առցէ և որ ընդունի զարդար, յանուն արդարոյ, զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի [ջ]ուր ցուրտ միայն յանուն Աշակերտի—ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։ Արդ՝ ի յասեալն Քրիստոսի՝ քաղցեա և ետուք ինձ յուտել, [ծ]արաւեցայ և արբուցիք ինձ, օտար էի և ժողովեցիք զիս. մերկ [էի] և զգեցուցիք զիս, հիւանդ էի և տեսիք զիս, ի բանտի էի և եկիք առ իս։ Արդ՝ ո՞վ էր քաղցեալ և ետուն զուտելիս, և ո՞վ ծարաւեցաւ, և ո՞յք արբուցին, ո՞վ է մերկն, և զո՞վ զգեցուցին, ո՞յք էին հիւանդք, [և] ո՞յք տեսօղք նոցին, ո՞յք էին ի բանտի, և ո՞ւր բանտն, և ո՞յք էին, ո՞րք եկին տեսանել ի բանտին, ով կարէ տալ պատասխանին թէ ո՞յք են [տառ]ապեալքն և ո՞յք այցելուք, եթէ ոչ թագաւորն փառաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ պատասխանի տայ, ինքն ինքեան և ասցէ. «ամէն ամէն [ասե]մ ձեզ», որովհետև արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանաց ինձ արարիք։ Քանզի բարերարն Աստուած ծառայից իւրոց պաշտօնն [իւրե]ան համարի և փոխարէնն բազմապատիկ հատուցանէ։ Զի Աբրահամ հայրն հաւատոյ զերից արանց զոտս լուաց ի պատիւ երկր... ի սրբոյ երրորդութեան, իսկ մի Անձն Սրբոյ երրորդութեան Միածին Որդին Աստուծոյ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զերկոտասանից անձանց որդւոց [երկոտաս]ան Սրբազան Առաքելոցն զոտս լուաց, ընդ միոյն չորիցս հատուցանելով։ Ուրեմն կարի բարւոք ենթադատեաց Զաքէոս մաք... (ոչ երախտեաց, այլ պարտուցն) ասելով. եթէ ոք զրկեցից, հատուցից նմա չորեկին, որոյ զխոստումն ընկալեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... [այ]սօր եղև՞փրկութիւն տանս այսմիկ։ Յայսցանէ յայտնի է թէ բարերարն Աստուած ընկալեալ ընդունի զարարեալ բարերարութիւնս [գործո]ց իւրոց առ փոքրագոյն պաշտոնեայս իւր, նաև խոստմունս ևս փոխանակ միոյն ոչ միայն չորիցս հատուցանելով՝ որպէս ..... ի սուրբ գիրս, այլև հարիւրապատիկն և հազարապատիկն աստ յայսմ աշխարհի, այլև զկեանս յաւիտենականս խոստացեալ է [վա]ղձելումն։ Արդ՝ որովհետև բարեպաշտութիւն քոյ միշտ փափաքի բարեաց գործոց և հանապազ առնուս զմարդասիրութիւնս... ց եկեղեցւոյ ըստ պատմելոյ վերոգրեալ Գաբրիէլ վարդապետին և Արհիեպիսկոպոսին։ Ուրեմն կայ և մնայ քեզ արգա[րութեան պ]սակն։ Եւ դու ակնկալեալ յաւիտենական փառաց, խնդրի զիշանիլն մեծութեանդ քոյ ի խնդիրս մեր և ձեռնտու[թեամբ] մերում, որք դտանին ի յօրհնեալ երկիրդ ձեր առնելով զբարերարութիւնս որքան և հնարէ, համարելով ոչ որպէս [օտար] այլ որպէս բուն համազգիս բարեկամս և սիրելիս։ Եւ մեք աստ ի սուրբ տեղիսն Քրիստոսի աղօթողեմք վասն ձեր և բարւոք [Զոր]ավարութեան կենաց ձերոց։ Քրիստոս տէրն մեր շնորհիւ սուրբ տեղեացն իւրոց զքաջութիւնս ձեր մշտատես արասցէ, և յաղթութիւն ձեր անխոնարհելի պահեսցէ ընդ յաղթող քաջանց հաւասարեսցէ։ Եւ որքան ի սուրբ երկիրս շնորհաբաշխութիւնք լինին, յայնց ամենից զձեզ մասնակիցս և հաղորդակիցս արասցէ, Կենսատու խաչն Քրիստոսի հովանի և պահապան լիցի ի վերայ իշխանութ[եան] ձ[եր]...[1]

[1] Բնագիրն այստեղ ընդհատվում է թերի է թուում մի-երկու բառ։

В. Восканян, В. Акопян

## Новый документ о Суворове


### Резюме

В настоящем сообщении публикуется письмо к А. В. Суворову ерусалимского армянского патриарха Иоакима Канакерци, хранящееся в рукописном армянском фонде Гос. Публичной библиотеки СССР им. Ленина под номером 7.

Это письмо, как всякий документ о великом русском полководце, представляет большой интерес, тем более, что оно—один из редких документов о связях Суворова с армянским народом.

Публикуемое письмо (1/5 печ. листа) является благодарственным обращением патриарха к Александру Васильевичу за драгоценный подарок, присланный им ерусалимскому армянскому монастырю св. Якова („Сурб Акопа") через патриаршего легата архиепископа Гавриила (Габриела).

Суворовский подарок, по словам патриарха, представляет замечательную картину с изображением „явления святого духа", „нарисованную рукою гениального мастера". Что было поводом этого подарка, каковы были связи Суворова с Ерусалимом и, в частности, с патриархом и его легатом, где хранится эта картина и кто ее „гениальный мастер"—пока трудно сказать. Ясно только то, что наши представления о связях Суворова с армянами (московскими, петербургскими, крымскими, нахичеванскими, румынскими, григориопольскими, астраханскими и закавказскими) расширяются и охватывают и далекий Ерусалим. Исключительное внимание Суворова к армянам поощряет их, вдохновляет в борьбе за освобождение от турецкого и персидского ига. Не случайно, что в этом же письме Иоаким Канакерци обращается к великому другу армянского народа еще в XVIII в. олицетворявшему дружбу двух народов, Суворову, с просьбой оказать всемерную помощь армянам.

Нет сомнения, что изучение этого документа и дальнейшие исследования сношений Суворова с армянским народом дадут возможность осветить вопросы, связанные с историей этого важного периода армяно-русских отношений.